

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 30

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎԱՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ա. Զաքարյանը, Կ. Շահագիզյանը, Ա. Հունանյանը, Ն. Պետրոսյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Սարգսյանը, Հ. Վարդանյանը, Վ. Մկրտչյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Սաֆարյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ համայնքի ավագանու 22.08.2019թ. թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Թ. Շահվերդյան/

3. Աշտարակ համայնքի ավագանու 22.08.2019թ. թիվ 38-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:

/Զեկուցող՝ Թ. Շահվերդյան/

/1/ Օրակարգը հաստատվել է 8 - ԿՈՂՄ ձայներ ստանալով:

Լ Ա Ե Ց Ի Ն - 2 - *Աշտարակ համայնքի ավագանու 22.08.2019թ. թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը և առաջարկեց փոփոխություն կատարել Աշտարակ համայնքի ավագանու 22.08.2019թ. թիվ 37-Ա որոշման մեջ: Նա մասնավորապես նշեց, որ խնդիրը կապված է Աշտարակի քաղաքապետարանի և <Սիրիահայերի Հիմնախնդիրները Համակարգող Կենտրոն> հասարակական կազմակերպության միջև 21.08.2013թ. կնքված ՍՄ 2709 նվիրաբերության պայմանագրի նոտարական կարգով լուծման հետ:

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն - 3 - Աշտարակ համայնքի ավագանու 22.08.2019թ. թիվ 38-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին

Հաջորդ հարցը ևս ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը և առաջարկեց համաձայնություն տալ լրացում կատարելու Աշտարակ համայնքի ավագանու 22.08.2019թ. թիվ 38-Ա որոշման մեջ:

Զեկուցողը նշեց, որ սույն որոշման ընդունումը կապված է նախորդ որոշման հետ և անհրաժեշտություն է առաջացել վերը նշված որոշմամբ լրացնել 3-րդ կետով՝ այն համապատասխանեցնելով Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջներին:

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

8 - ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2019 թվականի սեպտեմբերի 13-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԱՁԱՏ ՁԱՔԱՐՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՁԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՁՅԱՆ

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ